ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «11» ապրիլի, 2022 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 06-Ա/Ք

ՀՀ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԵԼԻՔ ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի փետրվարի 15-ի N 204-Ա/2 հրամանով հաստատված «Գիտական միջոցառման և երիտասարդ գիտնականների դպրոցի կազմակերպման համար ֆինանսական աջակցության տրամադրման կարգի» 6-րդ կետը, հաշվի առնելով ՀՀ գիտության կոմիտեի նախագահի 2022 թ. փետրվարի 25-ի N 03-Ա/Ք հրամանով ստեղծված աշխատանքային խմբի 2022 թ. ապրիլի 5-ի առաջարկությունը և ելնելով ՀՀ պետական բյուջեով նախատեսված հատկացումների չափից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

Հաստատել ՀՀ 2022 թվականի պետական բյուջեից ֆինանսավորվելիք.

1) գիտական միջոցառումների ցանկը՝ համաձայն հավելված N 1-ի,

2) երիտասարդ գիտնականների դպրոցների ցանկը՝ համաձայն հավելված N 2-ի:

ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ

(պարտականությունները կատարող)

Հավելված N 1
ՀՀ ԳԿ նախագահի
«11» ապրիլ 2022 թ.
N 06-Ա/Ք հրամանի

Գիտական միջոցառումների ցանկ

Հ/հ	Խորագիր	Կազմակերպություն
1	Տիեզերական հետազոտություններ և տեխնոլոգիաներ	ՀՀ ԳԱԱ «Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան» ՊՈԱԿ
2	Պոստմոդեռնիզմը հումանիտար ոլորտներում	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
3	XVIII միջազգային կոնֆերանս «Սիմետրիայի մեթոդները ֆիզիկայում»	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
4	Բարդության էվոլյուցիան վիճակագրական ֆիզիկայի տեսանկյունից	«Ա.Ի.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
5	Մաթեմատիկական անալիզ և դիֆերենցիալ հավասարումներ	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
6	Հեռափոխելով քաղաքը. մարդաբանական դիտանկյուն	ՀՀ ԳԱԱ «Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ

Հավելված N 2
ՀՀ ԳԿ նախագահի
«11» ապրիլ 2022 թ.
N 06-Ա/Ք հրամանի

Երիտասարդ գիտնականների դպրոցների ցանկ

Հ/հ	Խորագիր	Կազմակերպություն
1	Բյուրականյան ութերորդ միջազգային ամառային դպրոց	ՀՀ ԳԱԱ «Վ.Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարան» ՊՈԱԿ
2	Հնագիտական գտածոների վերականգնման ամառային դպրոց	ՀՀ ԿԳՄՍՆ «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ